Է. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 25 ՕԳՈՍՏՈՍ 1904 — ԹԻՒ 647

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ· ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ	համար
Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի	համար
Տարեկան	3 տլր.
Վեցամսեայ	1.50 »

Առանձնական տողը առա ջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է· երեսին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

Վառնայի համար ամոսէ 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղրկել հրատարակչատան հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ամոսէ

)(20 ՍԱՆԹԻՄ)(

Պուլկարիոյ համար ամոսէ

)(15 ՍԱՆԹԻՄ)(

—o—

Գրութիւնք եւ չեկ տրուիր

R. P. Kalemcarian, Mechitharistengasse Vienne (Autriche) N. 4.

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԴԲՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Հազուադէպ և տարօրինակ պատահարներ էին որ այս մարդը երեսուն տարի առաջ արքայական պատուի կը հրաւիրէին։ Մեծ էին այս յոյսերը, որ սկիզբները ասիկա կը ներշնչեր։ Երբ Թուրքական վատթար վիճակը անտանելի էր դարձեր, երբ գանձարանի բացը սկսաւ տարեկան հարիւր միլիոնով բարձրանալ, ոսկեղջիւրի կառավարութիւնը ինքզինքը սնանկ յայտարարեց՝ տեղեկացնելով պետական պարտատէրներուն թէ՝ պարտքի տոկոսներուն միայն կէսը կրնայ վճարել։ Միեւնոյն ատեն հարկերը ծանրացաւ և դժգոհութիւնը բարձրացաւ։ Այս ժամանակներն էր որ Հերցեգովինայի սերպիական ժողովուրդը Տօնթենեկրօի, Սերպիոյ և թերեւս նաեւ Ռուսիոյ քարոզիչներէն դրդուած սկսաւ Թուրքական գերիշխանութեան դէմ ելլել։ Թուրքական կառավարութիւնը անգամ մը ալ ստիպուած եղաւ բարենորոգումներու ծրագիր մը հրատարակել։ Ամենափայլուն խոստումներ կը տրուէին հպատակներուն։ պաշտօնները բոլոր քաղաքացիներու համար մատչելի կը դառնային։ հարկերը կը թեթեւնային և արդարադատութիւնը նոր հիմքերու վրայ պիտի դրուէր։ Այո՛, մինչեւ անգամ առանձին մարմին մը կազմուեցաւ, որու պաշտօնն էր հսկել բարենորոգումներու իրական գործադրութեան վրայ։ Դեռ այն ժամանակ պետութիւնները Թիւրքիոյ տուած խոստումներու մասին իրենց հաւատքը կարնցուցեր էին։ Աւստրօ-Հունգարական միապետութիւնը Անդրասսիի խորհուրդով արեւելեան մեծ քաղաքականութիւն մը ձեռք առաւ։ Անդրասսին կը պահանջէր քրիստոնեաներու հաւասարութիւնը մահմեդականներու հետ իսկ ինչ կը վերաբերեր վերաքննութեան, ասիկա առաջարկեց յանձնախումբ մը կազմել, որու թէ՛ քրիստոնեայ և թէ՛ մահմեդական ներկայացուցիչները հաւասարապէս յարգուած պէտք է ըլլային։ Թիւրքիա երբէ՛ք չը դադրեցաւ խոստանալէ, սակայն երաշխաւորութեան և վերաքննութեան մասին ան բնաւ լսել չէր ուզեր։ Հերցեգովինայի ապստամբութիւնը շուտով կատարեալ կռուի մը վերածուեցաւ, պուլկարական շարժումները կը քաջալերուէին սերպիականներէն։ կատաղութիւնը սաստկացաւ։ և Սալոնիքի մէջ մինչեւ իսկ Թուրքերը ֆրանսական և գերմանական հիւպատոսներ մորթեցին։ Այդ տեսակ խնդիրներն Թուրքական ժամանակակից քաղաքական կեանքի հորիզոնի վրայ նորագոյն հոգեր առաջ եկան։ Քանի մը տարիներէ ի վեր Ապտիւլ Ազիզը արդէն իր շինութեանց մոլութեամբն ու շռայլութեամբը դժգոհութիւն էր առաջացուցեր։ Այս դժգոհութիւնը ծնունդ տուաւ Թուրքական հասարակական կեանքի մը։ կուսակցութիւն մը կազմակերպուեցաւ, և երիտասարդ Թուրքերը սահմանադրութիւն կը պահանջէին։ Ամենէն առաջ պէտք էր բացարձակ միապետութեան բեժիմը տապալուէր։ Իւլէմաններն ու նախարարները իրաւունք ունէին Թագաւորին նկատողութիւններ ընելու։ Եւ եթէ ան չէր շըտկուի և կը շարունակէր կամայականութեամբ օրէնքը ոտնակոխ ընել, այն ատեն ասոնք իրաւունք պիտի ունենային Սուլթանը գահընկեց ընելու։ Այն յայտագիրը, զոր մահմեդական հայրենասէրները եւրոպական Մեծ-պետութիւններու մատուցին՝ կը շեշտեր թէ՝ Թիւրքիան կը փրկուի, եթէ բռնակալի մը տեղ իմաստուն իշխան մ՚ունենայ, ասոնք օգնական որուելով բոլոր հպատակ ազգերու և կրօններու ներկայացուցիչներէ բաղկացած մէկ խառն խորհրդարան։ Այս կ՚ըլլար իսկական լուծումը, և ասիկա չը հակասիր բնաւ Ղուրանի ոգուն, որովհետեւ ըստ Ղուրանի Թիւրքիան ընտրական պետութիւն մըն է։

Երբ իրերը այդքան առաջացած էին, հրապարակ ելան Սօֆիաները։ Ասոնք ցոյց ըրին Սուլթանի պալատի առաջ։ Սուլթանը այս անհանգիստ երիտասարդութեան հարցնել տուաւ թէ՝ իսկապէս անոնք ի՞նչ կուզեն։ Պատասխանը զուտ Թուրքական էր։ —«Մենք ոչինչ չենք ուզեր»— ազազակեցին ասոնք —«սակայն Սուլթանը պէտք է գիտնայ թէ՝ կառավարութիւնը բանի պէտք չէ»— Ապտիւլ Ազիզը այս բողոքը լսեց։ Մեծ վեզիրը հրաժարեցուց, և նախարար եղաւ երիտասարդ Թուրքերու կուսակցութեան վարիչներէն մէկը՝ Միտհաթ փաշան։ Բայց այս պատրաստակամութիւնը Սուլթանին շատ քիչ օգնեց։ Շէյխ-իւլ-իսլամը զայն պաշտօնանկ ըրաւ։ Եւ հինգ օր յետոյ յայտարարուեցաւ թէ՝ Միտհաթ փաշան մկրատով մը ինքնասպան է եղեր։ Այն կարճ ժամանակամիջոցին, երբ Մուրատ Ե.ը կ՚իշխէր, Միտհատ փաշան էր տէրութեան դրօշակիրը։ Ասոր բարենորոգչական ծրագիրները ապագայ Թագաժառանգ Ապտիւլ-Համիտի կողմէ գիտակից ոգեւորութիւնով ընդունուեցան։ Ապտիւլ-Համիտը կը ներկայանար որպէս եռանդուն ապատամիտ, մինչեւ որ Շէյխ-իւլ-իսլամը Մուրատն ալ գահընկեց ըրաւ։ Ասկեց վերջ Թիւրքիոյ համար եկան ծանրագոյն ժամանակներ։

Մեծ պետութիւնները կը պահանջէին Հերցեկովինայի քրիստոնեայ բնակչութեան համար բարենորոգչական յանձնախումբ մը եւրոպական հիւպատոսներու վերաքննութեան ներքոյ։ Ասոր հետ միասին պուլկարական ապատամբութեանը վերջ մը պէտք է դրուեր։ Եւ որովհետեւ կանոնաւոր զօրաբանակը Հերցիգովինայի մէջ կբաղուած էր, ուստի անկանոն զօրագնդեր՝ պաշիպոզուքներ, դրկուեցան Պուլկարիա ճշմարիտ բարբարոսներ, որոնց գործած անգթութիւնները կլատտոնի զայրոյթը շարժեցին։ Եւրոպական պետութիւնները ըսկսան Թուրք իշխանութիւնը այլեւս ինքնագլուխ պետութիւն չը նկատել։ Որպէս զի եւրոպական խնամակալութիւնը արգիլեն, երիտասարդ Թուրքիայի կուսակցութիւնը կը ձգտէր Թուրքական միապետութիւնը՝ սահմանադրականի վերածել։ Օսմանեան ազգը, ըստ երեւոյթին, կուզէր ինքը կառավարել։ Դժուար է որոշել թէ՝ արդեօ՞ք երիտասարդ Թուրքերը սահմանադրութիւնն մտցնելը իրօք կը մտածէին։ Հաւանական է թէ՝ ներքին բարեկարգութիւնները միջոց կընդունէին պետութեան սպառնացող քայքայումի առջեւն առնելու համար։ Բայց հաւանական է նոյնպէս թէ՝ անոնք մեծ պետութիւններուն պարլամենտական կօմէտիա մը կը խաղային՝ Թուրքական գործերու մէջ օտար միջամտութիւնները արգիլելու դիտումով։ Բայց և այնպէս Թուրքիոյ մէջ սահմանադրական կարգեր հաստատուեցաւ։ Նախարարական պատասխանատուութիւն, երկու ներկայացուցչական մարմին՝ մէկ սենատ և մէկ ալ ընտրուած երեսփոխաններէ կազմուած խորհուրդ։ Մահմեդականութիւնը մնաց որպէս պետական կրօնք։ Այս առթիւ պետութիւններուն ղրկուած շրջաբերականին մէջ կըսուէր թէ՝ Թուրքական սահմանադրութիւնը ամէն դաւանաբանական նկարագիրներ կը հանդուրժէ, թէ՝ պետութեան մէջ ազատութեան, արդարութեան և հաւասարութեան իշխանութիւնը քաղաքակրթութեան յաղթանակը կտպահովէ։ Եւ մասնաւորապէս շեշտուած էր թէ՝ նոր սահմանադրութիւնը ոչ թէ միայն խոստում մըն է, այլ իրողութիւն։ Ասով Միտհաթ փաշան հազուադէպ յաջողութիւն մը ունեցաւ։ Բայց երբ մեծ պետութիւնները իրենց ուլտիմա-

առումի մասին խօսք բաց բրին, նոր տապկած մեծ խորհուրդը պատասխանեց թէ՝ եւրոպական պահանջները թուրքական սահմանադրութեան կը հակասեն։ Քանի մը շաբաթ յետոյ Միդհաթ փաշան տապալուած էր։ Ռուս-տաճկական պատերազմը յաջորդեց։ Պերլինի վեհաժողովէն ետքը Ապտիւլ Համիտը Երլտըզ Քէօշքը քաշուեցաւ, բարենորոգումներն ալ օդը ցնդեցան։

Դժբաղդ Մուրատի մահը վայրկեան մը կը զաթեցնէ այն հարցը թէ՝ թուրքական քաղաքականութիւնը ի՞նչ ճամբով պիտի ընթանար, եթէ ան ուժեղ, գիտակցուն նկարագիր մը ունեցած ըլլար, եթէ ան իրօք բարենորոգիչ մը ըլլար։ Պարզ է, որ եթէ Մուրատը կարողանար ուժով մտցնել իր մտածած բարենորոգումները, այսօր Թուրքիան գոնէ վրկուած չըպիտի ըլլար իր օրինական զարգացումէն. բան մը, որ ալ աւելցած վերջը անկարելի է անոր համար։ Այսով արեւելեան հարցը բոլորովին տարբեր կերպարանք մը կ'առնէր։ Թիւրքիան սակայն լիթարկիական քունի մէջ է խորասուզուած։ Միայն մէկ կէտի մէջ է, որ ան որոշ յառաջադիմութիւն կը ցուցնէ։ Ապտիւլ Ազիզը Չըրաղանի պալատի մէջ բռնի մահով մը մեռաւ, մինչ նոյն պարիսպներուն մէջ Մուրատը գոցեց աչքերը յաւիտեան։

(Ն. Ց. Պ.)

ՄԻՇՏ ԿՌԿՌՈՑԻ ՁԱՅՆԵՐ

Թիֆլիզ 25 Յուլիս 904

Այն օրէն ի վեր սկսած են կռկռոցի ձայները, երբ «Սասունը» ստիպուած ինքնապաշտպանութեան կը դիմէր. չնկճուելու չի փշրուելու Թիւրք գազանի այլեւս վիրաւորուած թաթի հարուածէն, որը տարիներէ ի վեր ոռոգած է ծրագիրներ որ գործադրել սկսած է նորէն «Հայաստանը առանց հայի» երբ հեռագրալուրերը կը հասցնեն այս կարգ մը այլանդակուած մարդիկը, որոշում մըն է արձակեցին «Սասունը» ջարդուեցաւ. Սասունն ալ գնաց միայն Սասունի վրայ յոյսերնիս դրած ենք, այն ալ այս դրօշակեանները ջարդել տուին։

Ահա այսպիսի անկապ այսպիսի խելօքեղ հուրհուրանքներով, իրենց կեղծաւոր ցաւակցութիւնը ու գաղտնագողի ուրախութիւնները պարզ կըբուէին։ Դեռ աւելին կայ երբ կը լսէին եկած հեռագրալուրերու բովանդակութիւնը. այն որ յուսադրիչ է կռկռոցի ձայները անմիջապէս կը կտրէին. չրթունքներու վրայ մռմռնջելով անհասկանալի խօսքեր, մելամաղձոտ դէմք մը կստանային, այս շատ որոշ է թէ գրդուած են, և երբ վրդովիչ լուր մը կ'լսէին, կարծես կապսէին, բոպէական կսկսի նորէն նոյն կրկնութիւնները նոյն կախարդական և մամայական դրդրանքներ։ Սասունը ջարդել տուին դրօշակեանները ապստամբ ըլլալուն և կոտորելու պատճառ եղան խեղճ Սասունցուն։ Այս է այդ խմբակի այդ հայութեան արիւն և հայ ոգի չի կրողներու բանն ու գործը այս օրերուս։ Քաղաքիլ ճաշարաններու, մութ անկիւններու, փողոցներու մէջ կարդացող չի հասկցող ների գրել և կարդալ չի գիտցողների ըսելիքը և ընելիքը։ Եւ այդ է կարծես իրենց պարտականութիւնը։ Ինչպէս այդ խմբակին մէջ նոյնպէս և իրենց Պօսթոն հրատարակուող Ճայոյաքէրթ-ի մէջ այն լուրը՝ որ ինչպէս ըսինք խուսադրիչներ «պապաձումն Զաքարիայի» են չէին գիտեր կարծես չեն կարդացած չեն տեսած։ Եւ երբ վրդովիչ և հայերս ի վնաս լուրը կը կարդային տեղական ամերիկեան թերթերու մէջ խոշոր տառերով իրենք ալ կը գրէին ցուցունելու համար թէ տեսէք դրօշակեաններու հասուցած վնասը հայ ազգին. տեսէք դրօշակեաններու ապստամբութիւն ինչ կարգի է և ինչ ազգապանութիւն անա Ամերիկայի սուտ քոռերը, սուտ խուլերը և արդար ու գաղտնի գործ տեսնող «Հնչակեան» արարածները։

Այս խմբակը և անոր հետեւորդները չէին որ տարի մը առաջ Մակեդոնական յեղափոխութեան ժամանակ իրենց ժողովներու բեմերէն և թերթերու մէջէն կը գնահատէին զանոնք ըսելով. «ահա այնպէս կըլլայ կռիւը և այ պէս կըլլայ յեղափոխական գործը»։ Մակեդոնացին ալ մեզի բաղդակից ազգ մը իր ճակատագրական կռիւներ որ կը մղեր, թէպէտ ունենալ իր անհագին վնասները։ Այն իր ապստամբութիւնը բացարձակապէս յայտարարեց, թէ ինք պիտի սկսի

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԷՐ
ԵՒ ԶԻՆՈՒՈՐԻ ՊԱՐՏՔ

Փոքրիկ բաքի մէջ, տարիներից ի վեր, գարնանը ծաղկում, զարդարւում եւ աշնանը զարդերը ցած թափւում, մերկանում էր մի հատիկ խնձորենին։ Գարնան եւ ամռան շոգերին նրա ստուերում նստում եւ զովանում էին տանեցիները։ Այժմ էլ՝ աշնանը երբ խնձորենին թօթափել էր իր բոլոր տերեւները եւ միայն չոր ու անզարդ ճղերն էր ցցել այս ու այն ուղղութեամբ, նրա տակ, խսիրի վրայ նստել էր տան երեք եղբայրներից ամենակրտսերը—մի գեղահաս երիտասարդ։ Նա մէջքով յենել էր խնձորենու բնին եւ գլուխը յետ գցած, հայեացքն ազատ թողել էր վերեւ, անորոշ տարածութեան մէջ։ Արեգակի իրիկնային թոյլ ճառագայթները խաղում էին խնձորենու ամենավերին ճղների վրայ եւ մի բարակ, թափանցիկ, ցուրտ հով մեղմօրէն դողացնում էր նրանց։

Երիտասարդը չէր զգում ոչ հովը եւ ոչ ցուրտ։ Նա մտախոհ էր։ Նրա նորածիլ բեխերի տակ իրար սեղմուած կարմիր եւ առողջ շրթունքները մերթ ընդ մերթ շարժւում եւ անհասկանալի հնչիւններ էին բաց թողնում։ Տանեցիները վերջին մի քանի օրերում զարմանքով էին դիտում այդ աշխոյժ, մշտազուարճ երիտասարդի մտախոհ եւ լրջութիւն առացած կերպարանքը։ Նա ամբողջ գիւղին էր յայտնի իր միշտ զուարթ, անփոյթ եւ ուրախ բնաւորութեամբ։ Իր բոլոր երիտասարդ ընկերների մէջ դարձեալ նա էր, որ ամենից աւելի էր սիրում պարել եւ երգել։ Հէնց այդ պատճառաւ էլ նրանց մէջ մտքից մոռացել էր երիտասարդի իսկական անունը եւ ամէնքը նրան կանչում էին Ճիգել։ Այդ անունն էին տալիս նրան դրացիները, բոլոր ծանօթները եւ նոյն իսկ տան մէջ ամէնքը, բացի մօրից։ Մայրն էր միայն, որ նրան այդ անունով չէր կանչում, նա էր որ չէր համակերպւում ուրիշներին եւ Սեդրակը չէր փոխում Ճիգելի։

Երիտասարդը նոյն մտախոհ, ինքնամոռաց դրութեան մէջ էր, երբ կամացուկ լսեց իր անունը։ Գլուխը հանդարտութեամբ շուռ տուեց եւ մօտիկ կանգնած տեսաւ մօրը։ Նա բարձրահասակ, տարիքոտ եւ քիչ սպիտակած մազերով մի կին էր։ Նրա դէմքը, հասակը եւ ամբողջ արտաքին կեցուածքը առնացի էին եւ ազդու։ Նա գիւղի մէջ այն կարգի, սակաւաթիւ կանանցից էր, որոնք դէն են շպրտում գիւղական կնոջ ամաչկոտութիւնը եւ որոնց համարձակութեան ու անտարտամութեանը քիչ տղամարդիկ կարող էին հասնել եւ նա կանգնել էր որդու առաջ իր արտաքին այդ բոլոր անհասիրտ համարձակութեան մէջ, մինչդեռ հոգին յուզուած եւ սիրտը թրթռում էր։

—Ինչո՞ւ ես այս ցրտին մինակ նստել ծառի տակ, դիմեց նա որդուն զսպուած, բայց հաստատուն ձայնով,

—Ցուրտ չէ, մայրի՛կ, ուզեցի մէկ էլ նայել այս ծառին եւ մի անգամ էլ կռթնել նրա մէջքին, չէ՞ որ այլեւս սրա տակ չեմ նստելու։

Մայրը աննկատելի կերպով ցնցուեց։ «Ուրեմն բոլորովի՞ն ճշդուեց եւ նոյն իսկ ինքն է՞ ուզում բացարձակ յայտնել ինձ», անցաւ արագութեամբ նրա մտքով. արտասուքը սեղմեց կոկորդը. սակայն նա կարողացաւ զսպել իր յուզմունքը եւ պահպանել սառնասիրտ կեցուածքը։

—Ինչո՞ւ չես նստելու. մի՞թէ էլ գարուն չպիտի գայ։

Եւ սրտի բաբախումն աւելի սաստկացաւ նրա մէջ. նա սրտատրոփ սպասում էր որդու պատասխանին եւ զգում էր, որ դրա մէջ կը լինի նրա այդ մի քանի օրուայ մտախոհութեան եւ երեկուայ իր գաղտնի կերպով բոլոր լսածների բացատրութիւնը։ Նրան թւում էր, որ որդին այդ պատասխանը տալիս, կամ լաց կը լինի, կամ ձայնը կը դողայ. այն ինչ որդին բոլորովին հանդարտ եւ անխռով պատասխանեց.

—Ինչո՞ւ չէ, մայրիկ, մի քանի ամսից յետոյ էլի գարուն կը գայ, խնձորենին կը ծաղկէ, զով ստուեր կը տարածէ եւ էլի առաջուայ նման շատ քաղցր կը լինի նրա տակ նստել զրոյց անել եւ կամ թէ կէսօրուայ հացն ուտել։

Մօր սպասածը դուրս չեկաւ. նրան այնպէս թւաց, որ որդու ասածների միտքը լաւ չը հասկցաւ։

—Հապա ինչո՞ւ ես ասում, որ այլեւս այդ ծառի տակ նստելու չես, հարց տուեց նա արագութեամբ։

—Առաւօտեան... ձմեռն է գալիս եւ մենք այսօր քաշուեցինք ներքին տունը..

Որդու այդ պատասխանից մայրը մնաց շուարած. «մի՞թէ ինքն իզուր տեղն է վախենում», նրա մէջ յուզմունքը փոխուեց կասկածի եւ զարմանքի եւ նոյն իսկ երեկ երեկոյանից, որուն մի գաղտնի ժողովի մէջ լրտեսելուց յետոյ սրտում մտած վախը փոքր ինչ փարատուեց։ Այդ շուարած դրութեան մէջ նրա գլխում այլեւս ոչ մի միտք չը մնաց եւ նա մեքենայաբար տուեց շատ անգամ կրկնուած միեւնոյն հարցը.

—Հապա ինչո՞ւ ես տխուր եւ ի՞նչ ես մտածում այդքան։

—Ուզում ես իմանա՞լ. ես այսօր քեզ կասեմ, թէ ի՞նչու եմ տխուր եւ ինչ եմ մտածում, ասաց երիտասարդը ոտքի կանգնեց եւ մօտեցաւ մօրը։ Դու կը զարմանաս անշուշտ, սիրելի մայրիկ, երբ ես բացատրեմ իմ տխրութեան պատճառը, որովհետեւ մեզ մօտ ամէն ոք միայն իր համար է մտածում եւ ուրիշ ցաւ չի տխրեցնում նրան. իսկ ինձ տխրեցնող ցաւը ուրիշ է եւ շա՜տ հեռու այստեղից. գիտե՞ս որտեղ, սիրելի մայրիկ՝ այնտեղ, որտեղից որ երեկ էր անցել օրուայ մարդը, որուն դուն տեսար մեր արհեստանոցում։ Ցնցւո՞ւմ ես, եւ լռո՞ւմ ես, թէ ինչ չէր էր պատմում նա այնտեղի մասին։ Դու եւ ուրիշները լսեցիք նրա պատմածները, մի քիչ ախ ու վախ արեցիք ու մոռացաք. դարձեալ նոյնն է ձեր կեանքը առանց ոչինչ փոփոխութեան եւ դու ամէն առաւօտ-երեկոյ ժամ ես գնում, նոյն աղօթքն ես անում Աստուծուն, ինչ որ դարերից առաջ. փոփոխութիւն չի մտել քո նոյն իսկ աղօթքիդ մէջ...

—Ո՛չ, որդի՛ս, մեղք մի՛ արա հոգուտ, ընդհատեց նրան մայրը, այն օրից յետոյ ես միշտ աղօթքիս մէջ յիշում եմ նրանց։

—Ուրեմն ես սխալուեցի, ներիր ինձ. յիշում ե՞ս, այդ լաւ է մայրիկ, բայց աղօթքով դու միայն քո հոգի՛ն ես թեթեւացնում եւ այդպիսով քեզ ես օգնում, այնինչ հարկաւոր է նրանց օգնել։

-Ինչե՞ր ես ասում, որդիս, ես ուրիշ ինչով կարող եմ նրանց օգնել. թէ կայ մի բան, որով կարող եմ, ասա՛, ես պատրաստ եմ...

Ձայնը խեղդւեց նրա կոկորդում, նա յանկարծակիի եկածի պէս ընդհատեց խօսքը, արագութեամբ գրկեց որդուն եւ լաց եղաւ։

—Ո՛չ, ո՛չ, այդքան հեռու, այստեղից-այնտեղ ես ոչնչով չեմ կարող օգնել նրանց, անսիրտ տղա՛յ. ասա տեսնեմ, ես ինչով կարող եմ օգնել, ինչո՞ւ ես ինձանից այդպիսի բան պահանջում։ Ես հարստութիւն չունեմ, որով օգնել կարողանամ, իմ ամբողջ հարստութիւնը դու ես. քե՞զ տամ. դու ի՞նչ պէտք կը գաս նրանց. ասա՛, ասա՛, անսիրտ տղայ. դու ի՞նչ պէտք կը գաս նրանց։

—Այո մայրիկ, ես պէտք կը գամ նրանց, ես պարտաւոր եմ...

—Սուս կա՛ց, անաստուած. դու ինձանից աւել ոչ ոքի պարտական չես. ոչ-ոքի համար այնքան պէտքական չես, որքան ինձ։ Ի՞նչ ես ուզում ինձանից. ամբողջ կեանքս եղել է մի տանջանք, արիւն եմ լացել մինչեւ հինգ ծնունդ մեծացրել, տուն-տեղ եմ շինել. հիմա, երբ մաշուած ոսկորներս մի փոքր հանգիստ պէտք է լինեն, ուզում ես միանգամից սպանե՞լ ինձ. Մայրասպան կը լինես, կայէնի պէս հալածուած կը մնաս։ Անաստուած տղա՛յ, ասա՛, մահս ես ուզում ինձանից։

վերջնականապէս գուրս գալ հրապարակ նեռուիլ Թոթափելու իր ստորկութեան շղթան մի անգամ ընդ միշտ և իրաւ որ գնահատելի էր։ Բայց այս արարածները ուր լսեցին ուր կարդացին որ սէկ յայտարարութիւնը տեսան թէ Սասունը պիտի ապստամբի, կրնան մեզի ցոյց տալ որոշուած յայտարարուած տող մը բառ մը կամ տառ մը նոյնիսկ։ Նոյն այդ պահուն դարձեալ հասարակութիւնն ալ գուգուած իրանց դէմ մըն էր որ սկսած էր, ո՞ւր են մեր յեղափոխականները ո՞ւր են ինչո՞ւ չեն շարժիր ժամանակն է ալ, այքերնին տնկած էին դաշնակցութեան, կանխաւ գիտնալով թէ անիկայ է մի միակ գործող յեղ. կուսակցութիւնը։

Վաղուան ապստամբ Սասունը այսօր ինքնապաշտպանութեան կռիւն է որ կը մղէ, իր արիւնը իր կեանքը սուղ ծախելով, մինչեւոյն ատեն բարձր պահելով հայի անունը ու պատիւը։ Արդ ո՞ւր էիք այն ատեն երբ կը գրուէր կը խօսուէր միշտ թէ հայ ժողովուրդ անտարբեր կենալու ժամանակը չէ, վտանգը մեծ է, և այս անգամ յախոր Հայաստանի սրտին է որ կը մխուի, տուէք ձեր նիւթական օգնութիւնը մի խնայէք ձեր գրամը, հայրենիքէն զէնք զէնք պահանջող

—Ո՛չ, մայրի՛կ, մահդ չեմ ուզում. ես խնդրում եմ քեզանից, որ դու քո ձեռքով կապես մէջքիս իմ պարկը...

Մայրը քիչ մնաց խելագարուէր. վերջին ծայր յուզման մէջ թեւերը տարածեց, գրկեց որդու գլուխը եւ անկուշտ կերպով, անընդհատ համբուրում էր նրան, հոտ էր քաշում եւ արտասուքը, յորդելով, ողողում էր նրանց դէմքը։ Մայրը թուլացաւ որդուն բազուկների մէջ՝ անսի՛րտ, անսի՛րտ արտասանելով..

* * *

Անցել էր երկու օր։ Այդ ժամանակամիջոցում Ճիպելի հոգեկան դրութիւնն անասելի էր։ Մայրը տանից դուրս չէր գալիս. անընդհատ լաց էր լինում եւ աղաչում էր նրան, թողնել իր մտադրութիւնը. մինչեւ անգամ ստիպեց որդուն, որ յայտնէ իրան գլխաւորի տեղը. նա կը գնար, կընկնէր նրա ոտները. բաց կանէր իր սրտի վէրքերը, ցոյց կը տար, լաց կը լինէր, կաղաչէր, այնպէս կանէր, որ գլխաւորն ինքը կը հրամայէր Ճիպելին մնալ Մոր մօտ։ Բայց անողոք որդին չէր լսում. մօր պաղատանքների դէմ՝ փոխանակ ընկճուելու, խղճահարուելու, աշխատում էր նրան համոզել, հաշտեցնել կատարուող իրողութեան հետ, հաւատացնել, որ իր տուած գոհը շատ փոքր է, համեմատած այնտեղի մայրերի տուած զոհերին եւ վերջապէս գնալ, չի՛ նշանակում անպատճառ մեռնել։ Մայրն էլ իր կողմից բոլորովին չէր հաշտւում, չէր ընդունում, որ նա կարող է գնալ եւ կենդանի մնալ։ «Դիակդ կը փռեն ճանապարհին՝ քարերի մէջ եւ նրանից ոչ մի օգուտ չկն սասնայ այնտեղի դժբաղդ մայրերը», ասում էր նա ողբալով։ Ընդամէնը մի քանի օր առաջուայ համարձակ, անվախ կինն այժմ ընկճուել, մի լալկան էր դարձել։ Նա հասկանում էր, որ ուժով չի կարող ստիպել որդուն՝ հնազանդուելու իրան եւ ճգնում էր արտասուքի, լացի, աղաչանքի միջոցով ազդել նրա սրտի վրայ եւ նա հասնում էր նպատակի, միայն կիսով չափ։

Այն ատեն Ճիպելը խօսքով աշխատում էր մօրը հաշտեցնել իրականութեան հետ եւ ոյժը գործ դնելով պահում էր արտաքին սառնասրտութիւն, բոլորովին ուրիշ բան էր կատարուում նրա ներսում։ Մօր արտասուքները, լացը, աղաչանքը եւ դրա հետ միասին ամբողջ տանեցիների այդ երկու օրուայ անտանելի կացութիւնը, ճնշում, սեղմում էին նրա սիրտը եւ սոսկալի խղճահարութիւնը տակնուվրայ էր անում նրա ամբողջ հոգեկան աշխարհը։ Նա տիրում էր իր մօրը. նրա կամքը ինչպէս մի պրեսթիւն, միշտ կատարել էր եւ մայրը պաշտում էր իր «անմեղ» որդուն, կեդրոնացնելով նրա մէջ իր սէրը, ուրախութիւնն ու ամբողջ կեանքը։ Զգում էր Ճիպելը, թէ ինչ կը լինի մօր դրութիւնը, երբ նա մէջ ի առաւօտեան կը պարթնի եւ չի տեսնի իր սիրած որդուն, գուցէ եւ ընդմիշտ։ Կը խելագարուէ դժբախտ կինը, կամ իսկոյն մահ կը տանայ եւ այդ բոպէներին Ճիպելը տատանուում, երկմտութեան մէջ էր ընկնում եւ նոյն իսկ մօրը բաղդաւոր պահելու համար, քիչ էր մնում վրճռէր յանձն առնել դասալիք լինելու անպատուութիւնը։ Նա ըմբռնում, գիտակցում էր, որ իր մօր այդ բաղդաւորութիւնը գուցէ աւելի Թանկ արժէր. քան իր կատարելիք գործը եւ նրա մէջ կարծես կամաց-կամաց թուլանում էր զինուորի վճռականութիւնը։

Երկու ամբողջ օր Ճիպելը չը հեռացաւ մօր մօտից, միայն երրորդ օրը կէսօրից յետոյ տանից դուրս եկաւ եւ վերադարձաւ ուշ-երեկոյեան։ Նա տուն մտաւ բոլորովին փոխուած. քայլերը համարձակ էին եւ դէմքի վրայ գրոշմուած էր բուռն վճռականութիւն։ «Ո՞ւմ մայրն այդպէս չէ». «զինուորի պարտքը նախապատիւ է որդիական սիրուց»՝ հնչում էին անդադար նրա ականջին, մի տեսակ անբացատրելի զգացմունքից թրթռում էր սիրտը եւ կարծես բոլորովին մոռացել էր մօրը։ Մութ բազի մէջ նորան գիմաւորեց տան ջահիլ հարսը—Սառան։ Նրանք քաշուեցին մի անկիւն եւ երկար միջոց կամաց ձայնով խօսակցում էին։ Վերջացնելով խօսակցութիւնը, մի քանի քայլ փոխեցին, դիմում էին դէպի տան դուռը, երբ Ճիպելը կանգնեցրեց.

—Ամէն բան մաքուր, պատրաստ է։

—Այսօր առաւօտեան բոլորը նորից մաքրեցի, օծեցի եւ ամէն բան կարգի դրի միայն մայրդ, քո դուրս գնալուց յետոյ, վերցրեց բոլորը, դրեց պահարանում. կողբեց եւ բանալին պահեց մօտը։

—Ուրեմն ի՞նչ պէտք է անենք, վախեցած բացականչեց Ճիպելը։

—Ես ամէն բանի եւ դրա համար էլ հոգացել եմ, վախենալուց ոչինչ չկայ։ Դու հանգիստ մնայ եւ այդ ժամին ո՛չ մի խօսք մօրա հետ. թող սիրտը կապած չը մնայ, այլապէս նա կարող է գիշերը չը քնել եւ գործը կը դժուարացնէ։

—Բայց դու ի՞նչ կանես, քանի որ պահարանը կողբուած է եւ ազմուկ հանել չի լինի։

—Ես, ի հարկ է. գիտեմ իմ անելիքը. դու բոլորովին հանգիստ մընայ եւ տաղորականի պէս մտիր անկողին։

—Բոլորովին վստա՞հ լինեմ։

—Այո՛, բոլորովին վստահ։

Ճիպելը ներս մտաւ տուն, Սառան կողբեց դրսի դուռը եւ նոյնպէս տուն մտաւ։ Տանեցիները բոլորել էին Թանրի շուրջը, բոլորն զբաղուած, երբ ներս մտաւ Ճիպելը. մայրը տեղ տուեց նրան իր կողքին. գրկեց եւ համբուրեց։ Նա այժմ բոլորովին հանգիստ եւ նոյն իսկ ուրախ էր տրամադրուած. այդ օրը երեկոյեան գընացել էր եկեղեցի, աղօթել եւ սիրտը թեթեւացրել էր։

Ամբողջ երեկոյի ընթացքում բոլորովին խօսք չը բացուեց Ճիպելի մասին. ամէնք ուզում էին, որ այդ երեկոյ ուրախ անցնի եւ խօսակցութիւնն ընդհանրապէս ընտանեկան գործերի մասին էր։ Այդ երեկոյի ընտանեկան խաղաղ եւ ուրախ տրամադրութիւնը ամենից աւելի ուրախացրեց Ճիպելին, գոնէ ուրախ եւ հաշտ կը բաժնուէին միմեանցից։

Անկողինները պատրաստեցին. մայրը իր ձեռքով ծածկեց Ճիպելի վերմակը, ինքն էլ մտաւ անկողին։ Սառան մարեց փոքրիկ ճրագը եւ տուն ընկղմուեց թանձր խաւարի մէջ, որ մի քանի րոպէ յետոյ, լսում էին միայն կանոնաւոր շնչառութեան ձայները։

Կէս գիշերն անցել էր. Երբ Կիսով չափ բաց՝ առն դռնից զգուշութեամբ բաղ դուրս եկան Ճիպելն ու Սառան, բեռնաւորուած մի քանի ծանր խուրջիններով, որոնք շտապով հագցրեց իր վրայ Ճիպելը։ Սառան օգնում էր նրան հոգածութեամբ եւ երբ բոլորովին պատրաստ էր, գրկեց նրան, մի քանի անգամ ջերմ համբուրեց, ոյժ գործ դնելով զսպեց սրտի ալեկոծումը. առաջացաւ եւ բաց արեց բազի դուռը։

—Գնա՛, Աստուած քեզ հետ, քաջ եղիր։

—Անչափ շնորհակալ եմ, բարեսիրտ Սառա, խնդրում եմ, մի՛թափիր մօրս. դու ունիս մի գանձիսկ սիրտ. որ կարող ես նրա համար փոխարինել ինձ, որա այդ եւ ես հանգիստ կը լինեմ։ Մնաս բարեաւ, շնորհակալ եմ։

Ճիպելը համբուրեց Սառային ճակատից։ Դուրս եկաւ բազի ցցնից եւ հաստատուն արագ քայլերով հեռացաւ։ Սառան նայեց նրա յետեւից պնդան, մինչեւ նա բոլորովին ծածկուեց իր տեսութիւնից եւ ապա այլեւս անկարող զսպելու արտասուքը, հեկեկանքը խեղդելով յետ եկաւ, դուռը կողբեց, զգուշութեամբ ներս գնաց տուն, ամէն բան իր տեղն դրած եւ հանդարտ մտաւ անկողին։

Ամէնքը խոր քնի էին։

Ակրդիս

1904 յունուար

Թիֆլիս

—)o(—

Թող լաւ գիտնան այսօր թէ ամբողջ հասարակութիւնը ճանչցաւ զիրենք և ապտակն ալ կերան, պարզ իրենց խաչագողութիւնը և հակայազգինական ըլլալնին ցոյց տալով։

Տաւրակ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅԱՏԱԿ ՀԱՑԵՐԸ

Կ. Պոլսէն սեպտեմբեր 1 թուականով կը հաղորդեն Թան-ի հետեւեալը.

—«Օսմանեան պաշտօնեաները տեղեկանալով թէ՝ հոս հայեր են եկած ամերիկեան անցագրերով, Ամերիկայի ներկայացուցիչէն կը պահանջեն անոնց արտաքսումը։ Ամերիկայի ներկայացուցչութիւնը մերժեր է առարկելով թէ՝ այդ հայերը, որոնք ամերիկական քաղաքացիներ են, այն տեսակ որևէ յանցանք մը չեն գործած, որով անոնց արտաքսումը արդարացուի։ Բ. Դուռը կը յամառի իր պահանջի մէջ, ասելով Բ. Դրան և ամերիկեան ներկայացուցչութեան միջեւ յարաբերութիւնները նորէն լարուած են։

ՍՈՒՏ ԵՎ ՏԵՂԻ ԳՈՎԱՍԱՆՔԸ

Կը տեսնենք մերինները այսքան լուռ ու մունջ մնալէ յետոյ վերջապէս ըստ բաւականի մեծ գրքոյկ մը քրին։

Անշուշտ կարդացի՞ր Վեղաքնոցեանի Թուղթիկը ո՞չ ի՞նչ հրապարակի քաներ կը գրէ։ Ըսելով հանեց գրպանէն Սասունքի պէս պահած Թուղթիկը գրպանիս առջեւ դնելով։ Ես յափշտակելով սկսայ կարդալ։ Բարեկամս ընդմիջելով կարդալս ըսաւ թէ՝ հատ մը թղանթ առեր են թշնամու ձեռքէն։ Ճշմարիտ ես շատ հետաքրքրուեցայ և անապարանօք հանեցի տկ։ Նոյս և սկսայ աւելի ուշադրութեամբ կարդալու՝ պարզ է որ ես ալ իբրեւ հայ անհատ երբ կը կարդայի այդ հրաշալի գրուածը կը հիանայի և սրբաէս համակրելի հառաչանքը հանեցի և շատ ուրախացայ։ Բայց շատ կարճ տեւեց ուրախութիւնս։ Ես տեսեցի Շապուհի Հնչակեան ինքնաքննադատութիւնը վերնագրով խմբագրակաղնը որ ամէն գովասանք հեղգած էր։ Այն պարոնները որ կը պարծենային գոռոզութեամբ նոր յաղթանակին էջէն ինկած դարձան. և քրթերնին կախած կը խորհին թէ ինչպէս նորէն ժողովրդին առջեւ արդա-

---

ՍԱՌԱՆ

Ամբողջ հանգիստ մնաց։ Ոչ ոք չի գիտցաւ նրա գաղտնիքը։ Ոչ ոք չի գիտցաւ, թէ ինչպէս Ճիպելը գիշերուայ ժամին դուրս եկաւ տանից։ Ոչ ոք չի գիտցաւ, թէ ինչպէս Սառան գնաց նրան ճանապարհելու

րացնեն իրենց օրկանը բայց անկարելի լինելը լաւ մը հասկցած նոյնիսկ իրենք կը քննադատեն Վերածնութեան Պ. խմբագիրները որ այդ տեսակ չափազանցութիւն չտրադրեր են, բարեբաղդաբար հիմայ ամէն ոք հասկցած է թէ ո՞վ է իրաւ խաչագողը և չարլադանը և խոշոր սուտեր կլլելու տարիները անցած են ամէն մարդ աչքը բացած է Ամերիկայ, Լօնտօն Պալքան և Սալմաստ վկայ են իրենց ապօրինի օրէնակներով և մասնուած ազատ ինքնադատողներու անկեղանոցը։

Տակաւին կը գտնուին այնպիսիներ որ սրճարանէ սրճարան թափառելով աղմուկներ կը հանեն թէ (ես 17 տարուան յեղափոխական եմ) ինծի պապա... կըսեն եւայլն, (ես 4 չիչէ օղի կր խըմեմ) (ես իրիկունէ մինչեւ առտու գինի խմող մարդ եմ) խնդրեմ ըսէք ինձ այսչափ ալ ինքնահաւան հերոսներով լեցուն կազմակերպութիւն մը ի՞նչ կարող է ընել, անցեալները ուրիշ մօնսէր մը մէկու մը հետը առեւտրական խնդրի համար կը հանէ իւր գրպանէն կարմիր կնիքով Կեդրոնէն եկած նամակ մը ցուցնելով կըսէ. «ինձ նայէ հիմայ քեզի տեռօրի կենթարկեմ իսկ դիմացի սպուչն ալ տեռօրիստէն վախնալով դուրս կելլայ. հա! հա! ի՞նչ չուտ տէռօրի կենթարկեն անոնք մարդը. վախնալու է և ամէն ոք պատրաստ ըլլալու է անակնկալ փորձանքէ։ Վերջին փորձն ալ ջուրը ինկաւ, այս այն փորձն է որ Վերածնութիւնը կուզէր չահագործել անկեղծ հայուն սիրտը որ կը հետաքրքրուէր հիմայ միայն կռւող ֆէտայիներով, և նա փորձեց հրապուրել իւր կեղծ գովասանքով անկեղծ հայը, պատճառ բռնելով անձնուէր հերոս հնչակ-ֆէտայիներուն արշաւախմբի չափազանցելով, որոնք երբէք պէտքը չունէին ...

Ամէն ինչ ապարդիւն է ծիծղրել և գովել օգուտ չըներ ժողովուրդը արդէն հասկցեր է ամէն ինչ և նա միշտ պիտի յարգէ միայն անձնուէր-ֆէտայիներու և պիտի աջակցի Սուրբ գործիչներուն։

Ժ.

Պուքարէշտ

904 Օգոստ. 19/1

ԿՈՉԱԿՆԵՐԸ

Ն. Ֆ. Պ-ն իր վերջին թիւերուն մէկուն մէջ մանրամասն ուսումնասիրութիւն մըն էր հրատարակեր կոզակներու ծագման, խաղացած դերի և քանակի մասին։ Ցիշելով թէ այդ ուսումնասիրութենէն պարզ կերեւայ որ ռուսական աշխարհակալութիւնները, և Լեհաստանի անկումը կոզակները պատրաստեցին, մէջ բերենք անոնց զինուորական քանակը, որ թերեւս անհետաքրքիր չէ։

Պատերազմի ժամանակ հետեւեալ ուժը կը ներկայացնեն կոզակները.

Ա. Եւրոպական մաս

Շրջան	Սպայ	Զինուոր
1. Դօն	1549	61886
2. Քուպան	885	33977
3. Թերեք	245	9904
4. Աստրախան	45	1812
5. Ուրալ	136	8579
6. Օրենպուրգ	398	18696
	3258	134,854

Բ. Ասիական մաս

7. Արեւել. Սիպերիա	126	8118
8. Սեմիրեչենսք	45	1962
9. Թրանսպալքան	210	9258
10. Ամուր	45	2109
	426	21,447

Ուրեմն ընդհանուր թիւն է՝ 3684 սպայ, և 156 301 զինուոր։ Ասոնց ձիերու թիւն է 156.158, որոնցմէ 5397ը կը գործածուին թնդանօթաձիգներու բաժնին մէջ։

ՀԱՅ ՄԱՍՆԱՒՈՐ ՎԱՐԺԱՐԱՆ

Վարժարանիս հինգերորդ տարեշրջանը կ'սկսի յառաջիկայ սեպտեմբեր 1-ին, չորեքշաբթի օր։

Մուտքի պայմաններուն ծանօթանալու և աշակերտ արձանագրել տալու համար կը խնդրուի որ, ծնողներն ու պաշտպանները հաճին անձամբ ներկայանալ վարժարան։ Կանխաւ չարձանագրուած աշակերտները պիտի չընդունուին։

Վարժարանը բաց է ամէն օր կէս օրէ առաջ 9–11 և կէս օրէ յետոյ 4–6, բացի կիրակի օրերէ։

Ուրիշ քաղաքներէ կարելի է դիմել ստորագրեալ հասցէով։

Կ. ՊԻՕՆԵԱՆ

Փ. Պօլիս, 21 Օգոստոս 1904

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Կ. Պոլսէն կը հեռագրեն,—նախկին Սուլթան Մուրատի թաղումը կատարուեցաւ լռութեամբ և պարզութեամբ։

Ցուղարկաւորութեանը ներկայ էին պալատէն յիսունի չափ մարդիկ։

Ո՛չ մէկ պաշտօնեայ կամ պետական մարդ ներկայ էր։

Պաշտօնականն չոր յայտարարութենէ մը զատ, որ հին Սուլթանի մահը կը հաղորդէր և որ թերթերու մէջ տպուեցաւ, ուրիշ ոչ մէկ բառ գրեչու արտօնուած չէր Մամուլը։

ՌՈՒՍԻԱ

Պետերսպուրկէ կը հեռագրեն Պերլին Հետեւեալը.

«Այստեղ մեծ խառնակութիւն մը առաջ եկաւ՝ շնորհիւ ոստիկանութեան գաղտնի տպարան մը գտնելուն, ուր յեղափոխական յայտագրեր կը պատրաստուէին։ Ընդհարում մը առաջ եկաւ զօրքերու և յեղափոխականներու միջեւ, որու միջոցին սպաննուեցան քառասուն զինուորներ և քանի մը սպաներ։ Բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուեցան։

—Պետերսպուրգէն կը հեռագրեն Փարիզ.— երկու ծպտեալ մարդիկ սպայի հագուստով կը մտնեն բանտի հիւանդանոցը կեղծ նամակ մը ձեռքերուն, և կը յայտարարեն թէ՝ նախարար Մուրավիեւը իրենց հրամայեր է Պլեհվէի սպաննողը տանիլ։ Աստր վրայ աՀաբեկիչը կառնեն և կը տանին, բայց յայտնի չէ թէ ո՞ւր։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Թէեւ հեռագիրները կը ծանուցանեն ռուսական բանակի մասնաւոր յաջողութիւններէն, սակայն և այնպէս Կուրոպատկինի Ցարին գրկած պաշտօնական տեղեկութիւններէն օր աւուր պարզ կ'երեւի թէ՝ նահանջը սկսուած է և կը շարունակուի։ Սպարապետի մը համար բարոյական մեծ սանձանք է տեղեկագրեր ստորագրել, որոնք որքան ալ քօղարկուած, երբացած և երկդիմի բացատրութիւններով հարուստ ըլլան, պարզ ցոյց կուտան թէ՝ բանակի ճակատը այսօր նոյնպէս ետ մղուեցաւ, որու վրայ երէկ կը կռուէր։ Եւ ո՞ւր է թէ ուրիշ մէկ թշնամի մը ըլլար, օրինակ մեծ պետութիւններու դաշնակցութիւն մը, այն ատեն ամէն մէկ պարտութիւն կրնար արդարացուիլ ու բացատրուիլ, բայց յաղթուիլ այս անարգուած, ասիական պզտիկ ժողովուրդէն, ասոր հետ մէկտեղ դեռ ցեղով տարբեր, այդպիսի թշնամու տարած յաղթանակները նկարագրել, ու սեփական ծրագիրներու ապարդիւն ըլլալը խոստովանիլ, իրօք որ շատ ծանր է ու դառն։ Բայց և այնպէս պէտք է խոստովանիլ. ապա թէ ոչ յաղթողի լուրերը աւելի շուտ երկրի շրջանը կընեն, և միշտ թշնամիէն առնուած լուրերը աւելի սոսկալի և մահացու տպաւորութիւն կընեն, քան թէ հարազատ թէեւ պարտուած բանակի գոյժերը։ Կուրոպատկինը կը պատրաստէ իր համաքաղաքացիները Լիաօեանկի գրաւման առթիւ։ Անիկա իր տեղեկագրին մէջ կ'ըսէ թէ՝ մեր գնդերը դեռ եւս քաղաքը կը տիրեն, մինչեւ իսկ քաղաքին վրայ գործուած յարձակում մը ետ մղեցին, և սակայն կը թողնէ վօզուան սաթիւ կմնակծի մէջ, թէ վաղը արդեօք ի՞նչ պիտի պատահի։ Ու Կուրոպատկինը կը նահանջէ։ Համայ թէ ակամայ, նահանջը նահանջ կը մնայ։ Այս նահանջը կրնար արդարացուիլ, եթէ տասնց ընդհարումի կատարուեր։

Մինչեւ որ Ռուսաստանը նորէն կարող ըլլայ յարձակողական դիրք բռնել, այդ բանի համար ան դեռ տխուր օրերու եւ կար չարք մը անցնելու է ու զոր ոչ թէ ինքնահաւան, ու ինքիրմով կուրացած ժողովուրդ մը կրնայ դիմանալ, այլ իրական մեծահոգի, և աւանց ներքին յետադէմ տարրերով առողջ ժողովուրդ մը։

Կռիւր Լիաօեանկի մօտ

Պետերսբուրգէն կը հեռագրեն սեպտեմբեր 3ին.

— «Կուրոպատկինը կը հեռագրէ թէ՝ ինքը հրամայեր է Լիաօեանկի լքումը և դէպի հիւսիս նահանջը»։

Լօնտօնէն կը հեռագրեն.

— «Պետերսբուրգէ «Ռէյտէր»ի գործակալութիւնը կը հաղորդէ թէ ռուսները թողուցին Լիաօեանկը, զոր ճարոնացիք առին։

Նոյն գործակալութիւնը կը հաղորդէ.

— «Դեներալ Շտակելբերգի հրամանատարութեան տակ գտնուած առաջին սիբերիական զօրաբանակը, որ 25000 հոգիէ կը բաղկանայ, Լիաօեանկէն դէպի արեւելք ռուսական գլխաւոր զօրաբանակէն անջատուած է։

Լօնտօնէն կը հեռագրեն.

— «Լիաօեանկի հշօրագոյն մաքառումի առթիւ եկած լուրերը արհաւրալի աղէտներու մասին կը պատմեն, որոնք տեղի են ունեցած ռուսական նահանջի պահին։ Մասնաւորապէս անհուլի դէպքեր պատահեցաւ Թայցի գետը անցնելու ատեն։ Բազմաթիւ ձիեր խեղդուած ծածկեր էին գետի երեսը, զինուորները ծայրայեղութեան յուսահատուած մահ կը ցանկային, և սնա ահագին խմբերով թափուեցան կամուրջի վրայ, որու ժամանակ կամուրջի մէկ մասը խորտակուեցաւ և անթիւ զինուորներ ջրերու խորութեանց մէջ անհետացան։ Տեսարանը այնքան ահռելի էր, որ զինուորներ խելագարուեցան։ Երկու կողմէն ալ վիրաւորներու թիւը չափազանց է, և մեծ կարիք կզգացուի բժիշկներու, մասնաւորապէս վիրաբոյժներու։ Վիրաւորներ բժնամօղները ստիպուած են միայն ծանր վիրաւորներուն նայիլ, թեթեւ վիրաւորուածները կը ձգուին իրենց և բաղաի կամքին։ Կորուստը պրգէն չկուն հազարի կը հասնի՝ սպաննուած և վիրաւոր։ Թօքիօի մէջ կը հաւտան թէ՝ մարշալ Օեամա, որ իր գլխաւոր զօրաբանակով Թայցի գետի հարաւային կողմը կը գտնուէր այս առաւօտ յաջողութեամբ կոտրաջեր է գետն անցնիլ։ Թուրքին երեկ կարողացած է գրաւել Հէյինկթայի բարձրութիւնները, և Թօքիօ մէջ կը հաւտան թէ՝ այսօր Թուրքին երկաթուղային ամբողջ գիծը կաղօղ պիտի ըլլայ տիրել։

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна